

**Մարելու ու կէս ժամի շափ թողլու է որ պաղի . ետքը կաթսային ծորակը բանալով ուրիշ ամանի մէջ առնելու է :**

**Հիւթին երեսը մնացած փրփուրը , ինչպէս նաև տակի գիրտը երկայն սեղանատախտակի մը վրայ դնելու է . ան սեղանին երեսը ծակ ծակ կ'ըլլայ վանդակի ձեռվ , չորս բոլորն ալքիչ մը բարձր . անոր վրայ մաքուր ու բարակ բամբակէ լաթ ծածկած է . հիւթը անոր վրայ կը լեցընեն որ քամուի մաքրուի , ու ետքը կ'առնեն բուն զտուած հիւթին հետ կը խառնեն : Ու որ բամբակէ լաթին տեղը բրդէ լաթ գործածես , հիւթին մէջի կիրը զբուրդը կը փացընէ :**

**Շաքարին հիւթը զտելէն ետքը նորէն կրակի վրայ դնելու է որ թանձրանայ : Իսայց թէ աս բանիս համար և թէ Ճակնդեղին ուրիշ գործողութեանց մէջ ինչ տեսակ կաթսայ գործածելու է , համառօտ մը դնենք :**

**Կլոր ձեռվ կաթսան ընդհանրապէս ամենէն լաւն ու աւելի յարմարն է . բայց զանազան գործողութեանց համեմատ ձեն ալ կը փոխուի . զոր օրինակ զտելու համար գործածուած կաթսաները քիչ մը խոր կ'ըլլան . շաքարը եզան արիւնով մաքրելու համար եղած կաթսան աւելի խոր . իսկ թանձրացընելու համար կաթսային խորութիւնը քիչ պիտի ըլլայ , այսինքն 4, 5 ոտք տրամագծին մէկ ոտք խորութեամբ . նոյն կերպով շինուած պիտի ըլլայ նաև եփելու համար գործածուած կաթսան , միայն թէ ասոր տակը գոնէ իրեք գճաշափ թանձրութիւն պիտի ունենայ : Ու որ մէկը քիչ ածուխ գործածելու մտքով վառարանին տրամագիծը կաթսային տրամագծին պղտիկ ընէ , տաքութիւնը անհաւասար կերպով կը տարածուի ու ինչուան շարապն ալ կը ռայ այրիլ . անոր համար շատ հարկաւոր է որ վառարանին մակերեսյթը կաթսային խարսխին տրամագծին հետ նոյն ըլլայ :**

**Առարաններուն վրայ կասկարայ դնելը շատ հարկաւոր է , նաև անոնց համար որ ածուխի տեղ փայտ կը գործածեն . վասն զի անով կրակը աւելի զօրաւոր և ուժով կ'ըլլայ : Երբ որ մէկուն վառարանը լաւ ու հաստատուն է , կրնայ թէ հանքային ածուխ գործածել և թէ փայտ :**

**Հիւթին բաւական թանձրանալը իմանալու համար՝ քիչ մը համընայելու է , թէ պահանջութիւնը առնելն ալ վարժողին բաւական է . վասն զի փորձ մարդը գործարաններուն մէջ քալելու ատենն ալմիայն հոտէն կը ռայ իմանալ թէ որշափ թանձրացեր է , և կիրը շատ է թէ քիչ :**

**Երբոր բաւական թանձրանայ հիւթը , ամէն մէկ կենդինար՝ հիւթին մէկ լիպրէ ու կէս կենդանական ածուխ լեցընելու է . և նորէն եփ մը տալէն ետքը երբոր Պոմէի հեղուկաշափին 20° աստիճանին կը համար թանձրութիւնը , փայտէ ընդունարաններու մէջ ժողվելու և զով տեղ մը դնելու է . հոն քսանուչորս ժամի մէջ բոլորովին կը զտուի , ու կրային նիւթերը տակը կը նստին :**

1. Գ. անդամ :

### ՎԵՐՏԱՄԱՍԻԹԻ ԹԻՒՆ

Զ 1° է զի յանկարծ

Ի ասան աստիճան

Ճերմաշափն 'ի ցած

Տայ ցըրտոյ նըշան :

Զ 2° այն իմաստակ

Զիւր ցուրտ շարագրած

Իբրու մեծ վաստակ

Ի լոյս ընծայեաց :